ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.12.2014թ.
234-ի 5

ՀՀ էկոնոմիկայի նախարար
պարոն Կարեն Ճշմարիտյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ճշմարիտյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա ունի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,
2. Խնդրում ենք տրամադրել մեքենաների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր մեքենայի մակնիշը եւ պետ. համարանիշը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Նախորդիվ ԻԱԿ-ի հարցումներին պատասխանելիս ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը խնդրել է հարցմանը կցել նաեւ լիազորագիր: “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքը չի նախատեսում իրավաբանական անձի կողմից ներկայացվող հարցումների դեպքում լիազորագիր ներկայացնելու պարտադիր պահանջ, իսկ լիազորագիր ներկայացնելու պահանջը հակասում է վերոնշյալ օրենքի կիրառման վարչական պրակտիկային եւ տեղեկատվության ազատության իրավունքի ունիվերսալ բնույթին եւ բովանդակությանը: Սույն հարցումը տեղեկատվության ազատության իրավահարաբերության ոլորտում է, իսկ տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրեսդրությունում ինձ հայտնի չէ որեւէ նորմ, որը պարտադրի նման դեպքերում ներկայացնել լիազորագիր: Ավելին, “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքը սահմանում է, որ հարցմամբ դիմողը որպես հասցե կարող է նշել աշխատանքի վայրի հասցեն (պարտավոր է նշել, եթե այլ հասցե չի նշում), ինչը վկայում է, որ աշխատանքի վայրի մասին նշումն ինքնին խնդրահարույց չէ տեղեկատվության ազատության իրավահարաբերություններում: Բացի այդ՝ տեղեկատվության ազատության իրավունքը յուրաքանչյուրի իրավունքն է, ինչը նշանակում է, որ տեղեկություն տնօրինող մարմնի գործողությունները պետք է նույնը լինեն անկախ նրանից, թե դիմողն ով է:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ նաեւ նշել, թե ո՞ր իրավական ակտի հիման վրա է տեղեկություն ստանալու հարցման հետ պահանջվում ներկայացնել լիազորագիր: Պահանջի հիմնավորման դեպքում պատրաստ եմ ներկայացնել լիազորագիր:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան